

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՋ<ՆՐԱՆՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ Գ <ՆՆԴԻՊՈՒՄԸ

(Ռումվար 27, Մոսկվա)

Խորհրդային Միության փլուզումից հետո միննույն երկրում գոյություն ունեցող Եկեղեցիներն իրենցից անկախ հայտնվեցին տարբեր նորանկախ երկրներում: Մինչ Խորհրդային Միության մեջ բոլոր քրիստոնեական հարանվանությունները պարբերաբար հանդիպում էին (մասնավաճող խաղաղության պաշտպանության դիրքերում), նորանկախ հանրապետությունների ստեղծումով արդեն իսկ ստեղծված քարեկամական հարաբերությունները կարող էին դրանով վերջ գտնել:

Ուստի ԱՊՀ ստեղծումից անմիջապես հետո փորձ արվեց պահպանել և խորացնել եղած կապերը, որի համար արդեն իսկ 1993 թվականից Քրիստոնյա հարանվանությունները պարբերաբար սկսեցին հավաքվել համաժողովների, որի արդյունքը եղավ Քրիստոնեական Միջհարանվանական Խորհրդակցական Մարմնի (ՔՄԽՄ) ստեղծումը 1996 թվականին՝ Միանկում, որի անդամ դարձան ԱՊՀ երկրների 19 Եկեղեցիներ: Այդ ժամանակից ի վեր ՔՄԽՄ-ն հանդիպում է արդեն երրորդ անգամ քննարկելու առկա հարցերն ու լուծումներ առաջարկելու քույր Եկեղեցիներին:

1999 թվականի Ռումվարի 27-ին տեղի ունեցավ ՔՄԽՄ-ի թվով երրորդ հանդիպումը, որի օրակարգում էին Քրիստոսի Ծննդյան 2000-ամյա Ռոբեյյանի առիթով մի որևէ համատեղ գործողությամբ հանդես գալու և այդ Ռոբեյյանի ծիրի մեջ Խորհրդային Միությունում հանուն քրիստոնեական հավատի նահատակված հոգևորականներին նվիրված մի գրքի համատեղ հրատարակման հնարավորությունների քննարկումը, ինչպես նաև ՔՄԽՄ-ի կանոնադրության և ֆինանսավորման խնդիրները:

Հանդիպումը նախագահում էին Մոսկվայի Ռուսաց Պատրիարքության Արտաքին Եկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Կիրիլ միտրոպոլիտը, Ռուսաստանի լատինաձեն կաթոլիկների առաջնորդ Թադեոս Կոնդրյունսկիչ արքեպիսկոպոսը և Ռուսաստանի ավետարանական քրիստոնյա-բապտիստների միության նախագահ Բ. Պ. Կոնովալչիկը՝ որպես համանախագահներ:

Մեկ օր տևած քննարկումների ընթացքում որոշվեց 1999 թվականի նոյեմբերի վերջին գումարել մեծ համաժողով՝ Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը միասնաբար արժևորելու և համատեղ կոչով հանդես գալու համար: Միասնական վկայաբանության հրատարակման առիթով եղան տարակարծություններ, որով վերջնական որոշում այս մասին չընդունվեց:

ՔՄԽՄ կանոնադրության հարցը թողնվեց ապագային՝ մշտական գործող մարմնի կողմից պատրաստված նախագծի քննարկումից հետո: Առաջիկա համաժողովի նախապատրաստության և առկա հարցերի մասին ՔՄԽՄ-ին առաջարկներ ներկայացնելու համար ստեղծվեց 10 մարդուց բաղկացած մի մարմին, որը, ամիսը մեկ անգամ հանդիպելով, պետք է դառնա մշտական գործող մարմին:

ՔՄԽՄ Գ հանդիպմանը Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցեց հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը: Մշտական գործող մարմնի անդամ դարձավ Ռուսաստանի հայոց առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը:

Մ. Ծ. Վ. Ա.